ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Գնում. Հանրային իրազեկման ռազմավարության մշակում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը

Պայմանագրի համարը՝ EFSD/COVID/QCBS/C-C/003-22

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Եվրասիական Կայունացման և Զարգացման Հիմնադրամից ստացել է (այսուհետ՝ «ԵԿԶՀ») 3,000,000.00 (Երեք միլիոն) ԱՄՆ դոլարի դրամաշնորհ՝ «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակի պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսից առաջացող սպառնալիքի հայտնաբերում եվ արձագանքում» ծրագրի ֆինանսավորման համար և նախատեսում է այդ միջոցների մի մասն ուղղել «Հանրային իրազեկման ռազմավարության մշակում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը» խորհրդատվական ծառայությունների վճարման նպատակով:

Խորհրդատվական ծառայությունները (այսուհետ՝ «Ծառայություններ») ներառում են.

• Հանրային իրազեկման քարոզարշավի (այսուհետ՝ «ՀԻՔ») ռազմավարության մշակում՝ Ծրագրի իրականացման, նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունքների համար;
• Ծրագրի հանրային իրազեկման արդյունավետ գործընթացն իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտ մեթոդների և գործիքների մշակում;
• Ծրագրի իրազեկման գործունեության, քաղաքացիների ներգրավման և հանրային հետադարձ կապի ռազմավարության նախապատրաստում:

Առաջադրանքի ընդհանուր տևողությունն երեք ամիս է՝ Խորհրդատուի հետ պայմանագրի կնքման օրվանից:
Առաջադրանքի մեկնարկի մոտավոր ամսաթիվը 2022 թվականի ապրիլ-մայիսն է:

Տեխնիկական Առաջադրանքը կցվում է սույն Հետաքրքրության Հայտերի Ներկայացման Հրավերին:

ՀՀ Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկը, հանդես գալով որպես Ծրագրի համակարգող խումբ (ԾՀԽ), սույնով հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին՝ ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը՝ Ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված մասնակիցները պետք է տրամադրեն տեղեկատվություն, որը հաստատում է իրենց համապատասխանությունը ստորև ներկայացված որակավորման չափանիշներին: Մասնակցի հետաքրքրության հայտը պետք է պարունակի հետևյալը՝

-Ընդհանուր տեղեկություններ ընկերության մասին և ընկերության կողմից մատուցվող ծառայությունների նկարագրություն;

-Ընկերության կողմից իրականացված և իրականացվող ծրագրերի, աշխատանքների ծավալների, ընկերության՝ վերջին 5 (հինգ) տարիների պատվիրատուների վերաբերյալ տվյալներ;
-Ընկերության կոնտակտային տվյալներ:

Որակավորման չափանիշներ.

(i) **Հանրային իրազեկման քարոզարշավի ռազմավարության մշակման փորձ** վերջին 5 տարիների ընթացքում՝ համապատասխան աշխատանքներով՝ պատվիրատուների կողմից տրված առկա երաշխավորագրերով (աշխատանքների ծավալի մասին նշումով);
(ii) **Խորհրդատուի անձնակազմում պահանջվող ոլորտում որակավորված փորձագետների առկայություն՝** համապատասխան բարձրագույն մասնագիտական կրթությամբ և խորհրդատվական ծառայությունների մատուցման փորձով:

Գնումն իրականացվելու է «Որակի և գնի վրա հիմնված ընտրություն» (QCBS) մեթոդի կիրառմամբ՝ ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Քաղաքականության (2018թ. նոյեմբեր) և ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Ընթացակարգերի (2018թ. նոյեմբեր), որոնք հրապարակված են Եվրասիական Զարգացման Բանկի՝ ԿԶԵՀ-ի միջոցների Կառավարչի, կայքում և ԿԶԵՀ-ի կայքում:

Մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն կամ համագործակցել ուրիշ մասնակիցների հետ: Համագործակցության դեպքում մասնակիցները պետք է նշեն միավորման ձևը (կոնսորցիում կամ ենթախորհրդատու):

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել հեռախոսով կամ *էլ-հասցեով* ՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00-ն: Կոնտակտային տվյալները ներկայացված են ստորև:

Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացվեն հայերեն կամ ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ Adobe PDF և Word տարբերակով՝ ստորև նշված էլեկտրոնային հասցեներով ոչ ուշ քան **2022թ. մարտի 25-ը**: Նամակի «Թեմա» տողում պետք է նշված լինի. *Հետաքրքրության հայտ- «Հանրային իրազեկման ռազմավարության մշակում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը»,* EFSD/COVID/QCBS/C-C/003-22:

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
Երվանդ Էլիբեկյան, Տնօրեն
Քրիստինե Ղամբարյան, Գնումների մասնագետ
Հեռ. (+374 10) 297536, 297537
էլ-հասցե՝ Email: info@healthpiu.am; kristine.ghambaryan@healthpiu.am;
կայք՝www.healthpiu.am

Տեխնիկական առաջադրանք
Հանրային իրազեկման ռազմավարության մշակում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը

A. Ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել Կայունացման և զարգացման Եվրասիական հիմնադրամից (այսուհետ՝ ԵԿԶՀ)՝ «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համաճարակի պատրաստվածության մակարդակի բարձրացում: Կորոնավիրուսային սպառնալիքի հայտնաբերում և արձագանք» ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») ֆինանսավորման համար:

Ծրագրի նպատակն է՝ ապահովել բժշկական օգնության շարունակականությունը գլոբալ COVID-19 համաճարակի պայմաններում, ինչպես նաև ապահովել հիվանդության տարածման սպառնալիքին արագ արձագանքելու կարողությունը (կորոնավիրուսով հիվանդների ժամանակին թեստավորում և բուժում):

Ծրագրի չորս բաղադրիչներն են.

• Բաղադրիչ 1. Վարակի կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարձրացում;
• Բաղադրիչ 2. Վարակիչ հիվանդությունների դեպքերի վարման համակարգի հզորացում;
• Բաղադրիչ 3. Բնակչության և բուժանձնակազմի շրջանում COVID-19-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում;
• Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում:

B. Նպատակներ և ակնկալվող արդյունքներ

Սույն հանձնարարականն ուղղված է «Բնակչության և բուժանձնակազմի շրջանում COVID-19-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում» 3-րդ բաղադրիչի իրականացմանը և ներառում է հետևյալը.

• Հանրային իրազեկման քարոզարշավի (այսուհետ՝ «ՀԻՔ») ռազմավարության մշակում՝ Ծրագրի իրականացման, նպատակներին հասնելու և ակնկալվող արդյունքների համար;

• Ծրագրի հանրային իրազեկման արդյունավետ գործընթացն իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտ մեթոդների և գործիքների մշակում;

• Ծրագրի իրազեկման գործունեության, քաղաքացիների ներգրավման և հանրային հետադարձ կապի ռազմավարության նախապատրաստում:

C. Հիմնական պարտականությունները

• Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «ՀՀ», «Հայաստանի Հանրապետություն») հանրային իրազեկման ոլորտի իրավիճակի վերլուծություն, ոլորտում առկա ռազմավարությունների, դրանց ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն: Զուգահեռաբար անհրաժեշտ է իրականացնել վիրուսային էթիոլոգիայի վարակիչ հիվանդությունների՝ շեշտը դնելով COVID-19-ի, ինչպես նաև Հայաստանում առավել տարածված հատկապես վտանգավոր վարակների, իրավիճակային վերլուծություն (խնդրի նկարագրություն, տարածվածություն, հիվանդացություն և մահացություն, իրավիճակի ինչպիսի գնահատական է ՀՀ-ում (հիվանդությունների ընդհանուր թիվը 3-4)):
• Իրավիճակային վերլուծության հիման վրա մշակել ՀԻՔ-ի ռազմավարություն: Փաստաթուղթի կառուցվածքը պետք է ներառի հետևյալ բաժինները.
    1. Ներածություն;

2. Նպատակներ և խնդիրներ;
3. Իրավիճակի նկարագրություն և գնահատում;
4. Ծրագրի վերաբերյալ հանրության իրազեկման արդյունավետ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ խնդիրների և կարիքների, մեթոդների և միջոցների սահմանում;
5. Իրականացման միջոցառումներ;
6. Ակնկալվող արդյունքներ:

Փաստաթղթի ծավալը չպետք է գերազանցի 25 էջը, բացառությամբ վերը նշված 5-րդ կետից՝ միջոցառումների նկարագրությունը, որը պետք է առանձին ներկայացվի հավելվածներում:

Փաստաթղթի բովանդակությունը պետք է ներառի.

- Բնակչության իրազեկման ծավալի և իրազեկման մոտեցումների սահմանում՝ հաշվի առնելով այն մարզերի (Արմավիր, Արարատ, Լոռի և հարակից մարզեր) առանձնահատկությունները, որտեղ իրականացվում է Ծրագիրը;
- Մշակում՝

  o վարակիչ հիվանդությունների կանխարգելման առկա ծրագրերի տարածման վերաբերյալ ռազմավարությունների/միջոցառումների (կենտրոնանալով COVID-19-ի վրա);

  o նոր առաջարկների՝ հանրային առողջապահական ոլորտում կրթման նպատակով՝ բնակչության լայն շերտերի իրազեկությունը բարձրացնելու վարակի սպառնալիքների, կանխարգելման անհրաժեշտության և կորոնավիրուսային վարակի տարածումը կանխելու միջոցառումների վերաբերյալ;

  o պատվաստումների վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության ծրագրերի իրականացման տեմպերը խթանելու և արագացնելու միջոցառումների (ներառյալ պատվաստվածների ընդգրկվածությունը/տոկոսը բարձրացնելու հնարավոր միջոցառումների մշակումը):
- նշանակված ֆոկուս խմբերի հետ աշխատանքի շրջանակի որոշում (մարքեթոլոգի/PR մասնագետի մասնակցությամբ)՝ քննարկումների արդյունքում անհրաժեշտ լուծումների հնարավոր բացահայտմամբ (քննարկումների անցկացում ֆոկուս խմբերում՝ տրամադրությունը, ակնկալիքները, գիտելիքները, մարդկանց վարքագծային դրսևորումները և մոտիվացիան որոշելու նպատակով, որը հիմք կծառայի հանրային իրազեկման ռազմավարության մշակման համար: Առնվազն 8 ֆոկուս-խմբային քննարկումների կազմակերպում, որոնք կբաժանվեն ըստ տարիքային խմբի, պատվաստումներին կողմ կամ դեմ, COVID-19-ով վարակված կամ չվարակված մասնակիցների, յուրաքանչյուր խմբում 12 մասնակից՝ 6 կին, 6 տղամարդ);
- սանիտարական լուսավորության և հանրային իրազեկման ոլորտում լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ համագործակցության մեխանիզմի որոշում, որը կբարձրացնի բնակչության և բուժանձնակազմի շրջանում COVID-19-ի մասին հանրային իրազեկվածությունը, ներառյալ վերոհիշյալ Ծրագրի մասին հանրային կարծիքի վերաբերյալ տեղեկատվության ստացման մեխանիզմները;
- հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության մեխանիզմի որոշում՝ հանրային առողջության ոլորտում լուսավորչական և տեղեկատվական միջոցառումներ իրականացնելու նպատակով;
- բոլոր շահագրգիռ կողմերին (ՀՀ ԱՆ, մարզպետարանների, բուժհաստատությունների վարչակազմեր/ներկայացուցիչներ, բժիշկներ և այլն)

լուսավորչական և տեղեկատվական միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավելու մեխանիզմների որոշում;

- լրատվամիջոցների հետ փոխգործակցության մանրամասն ընթացակարգի մշակում, ԶԼՄ-ներին վարակիչ հիվանդությունների, մասնավորապես՝ COVID-19-ի կանխարգելման և վերահսկման ուղղությամբ բնակչության շրջանում իրականացվող աշխատանքների վերաբերյալ հստակ տեղեկատվություն տրամադրելու մեխանիզմների որոշում:

• ՀԻՔ-ի իրականացման պլանի մշակում՝ միջոցառումների և միջոցների մանրամասն ժամանակացույցով, մանրամասն, լայնածավալ և հիմնավոր նկարագրությամբ, ներառյալ ՀԻՔ-ի իրականացումը ստորև նշվածի միջոցով՝

- զանգվածային լրատվության միջոցների (մեդիա պլան, հեռուստասցենարներ և այլն),
- ինտերնետ լուծումների,
- գովազդային նյութերի (մինի ուղեցույցներ, բրոշյուրներ, բուկլետներ, պաստառներ, գովազդային վահանակներ և այլն),
- ազգային և տեղական մակարդակներում կլոր սեղանների/հանրային ֆորումների, նախապատրաստման, կազմակերպման և լոգիստիկայի, սցենարների միջոցով:

• Ծրագրի ղեկավարի կողմից առաջադրված այլ խնդիրների իրականացում ՀԻՔ-ի ռազմավարությունը մշակելու համար:

D. Վերջնարդյունքներ և հաշվետվողականություն

Խորհրդատուն պետք Պատվիրատուին ներկայացնի հանրային տեղեկատվության մասնագետի և բժշկական խորհրդատուի հետ համատեղ մշակված յուրաքանչյուր փուլի ծառայությունների մատուցման հաշվետվությունները/արդյունքները՝ ելնելով վերը նշված A և B ենթակետերում ներկայացված ծրագրի հիմնական խնդիրներից և նպատակներից:

I փուլ. Հաշվետվություն ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում հանրային իրազեկման ոլորտի իրավիճակի վերլուծության, առկա ռազմավարությունների ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև վիրուսային էթիոլոգիայի վարակիչ հիվանդությունների իրավիճակային վերլուծության արդյունքների վերաբերյալ՝ շեշտը դնելով COVID-19-ի, ինչպես նաև Հայաստանում առավել տարածված հատկապես վտանգավոր վարակների վրա (խնդրի նկարագրություն, տարածվածություն, հիվանդացություն և մահացություն, իրավիճակի ինչպիսի գնահատական է ՀՀ-ում (հիվանդությունների ընդհանուր թիվը 3-4)): Աշխատանքը պետք է ավարտվի՝ 0,5 ամիս պայմանագրի ստորագրման օրվանից:

II փուլ. Մարտավարական պլանավորման հաշվետվություն, ներառյալ SWC-վերլուծությունը, առճակատման մատրիցայի հատվածավորումը: Աշխատանքը պետք է ավարտվի՝ 1 ամիս պայմանագրի ստորագրման օրվանից:

III փուլ. Ինֆեկցիոն հիվանդությունների և, մասնավորապես, COVID-19-ի դեմ պայքարի, վերահսկման և կանխարգելման ՀԻՔ-ի մշակված ռազմավարության նախագիծ/աշխատանքային տարբերակ: Աշխատանքը պետք է ավարտվի՝ 2 ամիս պայմանագրի ստորագրման օրվանից:

Փուլ IV Վարակիչ հիվանդությունների և, մասնավորապես, COVID-19-ի դեմ պայքարի, վերահսկման և կանխարգելման ՀԻՔ-ի մշակված ռազմավարության վերջնական տարբերակը: Աշխատանքը պետք է ավարտվի՝ 2,5 ամիս պայմանագրի ստորագրման օրվանից:

Փուլ V ՀԻՔ-ի իրականացման պլան՝ միջոցառումների մանրամասն ժամանակացույցով և դրա իրականացման միջոցներով: Աշխատանքը պետք է ավարտվի՝ 3 ամիս պայմանագրի ստորագրման օրվանից:

Վերոնշյալ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն և ռուսերեն տարբերակներով, pdf ձևաչափով՝ էլեկտրոնային ձևով լազերային սկավառակի վրա / թղթի վրա:

Վերոնշյալ փաստաթղթերը ստանալուց հետո Պատվիրատուն Խորհրդատուին ուղարկում է փաստաթղթերի վերանայման/ուղղման վերաբերյալ դիտարկումներ (եթե այդպիսիք կան): Խորհրդատուն պետք է վերջնական տեսքի բերի փաստաթղթերը և թարմացված տարբերակը ուղարկի Պատվիրատուին: Խորհրդատուին համապատասխան ծանուցում ուղարկելուց հետո Փաստաթուղթը Պատվիրատուի կողմից համարվում է ընդունված: Փաստաթղթերի ներկայացման վերը նշված պայմանները ներառում են վերանայման ժամանակը:

E. Պահանջվող որակավորումը

Խորհրդատու՝ առնվազն 5 տարվա փորձ ունեցող ընկերություն/կազմակերպություն: Վերջին 5 տարիների ընթացքում հանրային իրազեկման քարոզարշավի ռազմավարության մշակման փորձ:

Խորհրդատուի կողմից առաջարկած թիմը պետք է համապատասխանի ստորև նշված նվազագույն որակավորումներին.

- Թիմի ղեկավար (կրթություն՝ բարձրագույն, մասնագիտություն՝ Սոցիալական հաղորդակցություն/ PR մենեջեր/ լրագրություն, 5 տարվա հաստատված մասնագիտական փորձով, ներառյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպման և պլանավորման ոլորտում (պետական և միջազգային կազմակերպություններում փորձը դիտարկվում է որպես առավելություն)),
- Հանրային առողջապահության մասնագետ (բարձրագույն կրթություն, մասնագիտություն՝ Հանրային առողջություն, 3 տարվա հաստատված մասնագիտական փորձով, ներառյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպման և պլանավորման ոլորտում (պետական և միջազգային կազմակերպություններում փորձը դիտարկվում է որպես առավելություն)),
- Սոցիալական հաղորդակցության մասնագետ (բարձրագույն կրթություն, մասնագիտություն - Սոցիալական հաղորդակցություն / PR մենեջեր / Լրագրություն, 3 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով, ներառյալ հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպման և պլանավորման ոլորտում (պետական և միջազգային կազմակերպություններում փորձը դիտարկվում է որպես առավելություն)),
- Սոցիոլոգ (բարձրագույն կրթություն, մասնագիտացված սոցիոլոգիա կամ այլ հարակից (հոգեբանական) բնագավառ, 3 տարվա հաստատված մասնագիտական աշխատանքային փորձով),
- Սոցիալական մեդիա մարքեթոլոգ (բարձրագույն կրթություն, մասնագիտություն՝ մարքեթինգ, 3 տարվա հաստատված մասնագիտական փորձով, այդ թվում՝ ռիսկերի կառավարման ոլորտում):

F. Առաջադրանքի կատարման ժամկետը

Առաջադրանքը կատարելու համար նախատեսված վերջնաժամկետը՝ երեք ամիս Խորհրդատուի հետ պայմանագրի կնքման օրվանից:

G. Վճարման պայմանները

Խորհրդատուն աշխատանքի է ընդունվելու պայմանագրով՝ կանխավճարով և հետսպասարկման վճարով: